ՆԵՄԵՍԻՈՍ ԵՄԵՍԱՑԻ ԵՎ ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑԻ
(փիլիսոփայական առնչություններ)

ՍԵՅՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Միջնադարյան հայ փիլիսոփայության ձևավորման ու զարգացման գործում անգնահատելի դեր են խաղացել հունաբան դպրոցի ներկայացուցիչների կողմից թարգմանված փիլիսոփայական բնույթի երկերը: Ընդսմին, խոսքը վերաբերում է ոչ միայն անտիկ փիլիսոփաների (Արիստոտելի, Պլատոնի, Փիլոն Ալեքսանդրացու և այլոց), այլև Արևելյան եկեղեցու նշանավոր հայրերի (Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիանզացի, Գրիգոր Նյուսացի և այլոց) ինչպես կրոնաաստվածաբանական, այնպես էլ փիլիսոփայական բովանդակությամբ երկերի թարգմանությանը: Դրանց թվում է Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» աշխատությունը, որը VIII դարի սկզբներին հունարենից հայերեն են թարգմանել Կեղծ-Դիոնիսիոս Արեոպագացու երկերի թարգմանիչ Ստեփանոս Սյունեցին՝ համագործակցելով Դավիթ Հյուպատոսի հետ[1]: Հայ թարգմանիչները այն վերագրել են Գրիգոր Նյուսացուն և վերջինիս անունով էլ դա տարածվել է միջնադարյան հայ մատենագրության մեջ: Ի դեպ, Նեմեսիոսին նվիրված տարբեր հետազոտություններում ընդամենը նշվում է, որ նրա երկը թարգմանվել է հայերեն[2]: Մինչդեռ նախ, Նեմեսիոսի երկի հայերեն թարգմանությունը ժամանակային առումով նախորդում է լատինական, արաբական ու վրացական թարգմանություններին, ուստի կարող է արժեքավոր լինել դրա քննական բնագրի կազմման առումով: Երկրորդ, Նեմեսիոսի երկը էական ազդեցություն է ունեցել համաքրիստոնեական քաղաքակրթության բաղկացուցիչ մասի՝ միջնադարյան հայ մշակույթի ու փիլիսոփայության, ի մասնավորի

---

[1] Այդ մասին տե՛ս **Ա. Սուքրի,** Նեմեսիոսի մարդակազմութեան գրոց եւ անոր հայ թարգմանութեան ճաշակ մը, «Բազմավէպ», ԼԸ, 1880, էջ 326-340, **Ա. Տիրոյեան,** Նեմեսիոս եւ նորա Յաղագս բնութեան մարդոյ գրոց հայկական հին թարգմանությունը, «Բազմավէպ», 1887, էջ 318-329, **Կ. Մուրադյան,** Գրիգոր Նյուսացին հայ մատենագրության մեջ, Եր., 1993, էջ 50-59, **Ս. Վարդանյան**, Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկի հայերեն թարգմանությունը, «Բանբեր Մատենադարանի», հ. 18, Եր., 2008, էջ 10-11:

[2] Տե՛ս, օրինակ, **Владимирский Ф. С.** Антропология и космология Немезия, еп. Емесского, в их отношении к древней философии и патристической литературы. Житомир, 1912. էջ 8, **Солопова М. А.** Немезий Эмесский. В кн.: «Античная философия: Энциклопедический словарь». М., 2008, էջ 503:

միջնադարյան հայ մտածողների փիլիսոփայական՝ մարդաբանական, հոգեբանական ու բարոյագիտական հայացքների ձևավորման վրա[3]: Չնայած դրան՝ հայ փիլիսոփա-պատմաբաններն ըստ էության չեն ուսումնասիրել Նեմեսիոսի երկի ազդեցությունը տարբեր դարերի հայ փիլիսոփայական մտքի զարգացման վրա: Օրինակ, Նեմեսիոսի երկից առատորեն օգտվել է Հովհան Որոտնեցին (1315-1388), սակայն նրա փիլիսոփայությանը նվիրված Գ. Գրիգորյանի գրքում[4] այդ մասին առհասարակ խոսք չկա, իսկ Ս. Զաքարյանի գրքում[5] ակնարկվել, բայց ըստ էության չեն վերլուծվել և գնահատվել Նեմեսիոս-Որոտնեցի փիլիսոփայական առնչությունները: Այս ամենը նշանակում է, որ գիտական հանրությանը պատշաճ մակարդակով չեն ներկայացվել ինչպես Նեմեսիոսի երկի հայերեն թարգմանության և մեկնաբանությունների հետ առնչվող հարցերը, այնպես էլ չեն հստակեցվել միջնադարյան հայ փիլիսոփայության զարգացման վրա այդ երկի ազդեցության շրջանակները: Սույն հոդվածի նպատակն է ցույց տալ Նեմեսիոսի «Մարդու բնության մասին» գրքի ազդեցությունը Որոտնեցու փիլիսոփայական-մարդաբանական հայացքների վրա: Նախ համառոտ կներկայացնեմ Նեմեսիոսի գրքում քննարկված հարցերը, այնուհետև ցույց կտամ, թե այդ հարցադրումներն ու դրանց լուծումները ինչպես են արտացոլվել Որոտնեցու փիլիսոփայական՝ մարդաբանական, հոգեբանական, բարոյագիտական և գոյաբանական (բնափիլիսոփայական) հայացքներում:

Նեմեսիոսը և նրա «Մարդու բնության մասին» երկը: Նեմեսիոսի կյանքի ու գործունեության մասին պահպանվել են չափազանց սուղ տեղեկություններ: Ենթադրվում է, որ նա ապրել է IV դարի երկրորդ կեսին և V դարի սկզբներին: Նրա մասին հայտնի են երկու փաստ. նա եղել է Եմես քաղաքի (այժմ Սիրիայի Հոմս քաղաքը) եպիսկոպոսը և

---

[3] Ի դեպ, Նեմեսիոսի երկի ազդեցությունը նկատվում է ոչ միայն միջնադարի, այլև XVII-XVIII դարերի հայ փիլիսոփայական մտքի վրա (այդ մասին տե՛ս **Հ. Ղ. Միրզոյան,** Սիմեոն Զուղայեցի, Եր., էջ 35, 36, 64 և այլն):

[4] «Որոտնեցու հայացքները, - գրում է Գ. Գրիգորյանը, - ձևավորվել են հիմնականում հայ մշակույթի արժեքների հիման վրա: Նա քաջ ծանոթ է եղել հայ անցյալի մտավոր ժառանգությանը, նշանավոր փիլիսոփա Դավիթ Անհաղթի մտահարուստ աշխատություններին, անտիկ շրջանի հեղինակների գործերից միջնադարյան Հայաստանում թարգմանաբար պահպանված երկերին: Կարդացել է վաղ քրիստոնեական շրջանի բյուզանդական մի շարք աստվածաբան-մտավորականների՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստվածաբանի, Գրիգոր Նյուսացու և այլոց երկերը» (**Գ. Հ. Գրիգորյան,** Հովհան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը, Եր., 1980, էջ 35-36): Ի դեպ, ժամանակին Հովհան Որոտնեցու «Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց» երկի հրատարակիչներ Ս. Արևշատյանը և Ս. Լալաֆարյանը նշել էին, որ Որոտնեցին հիմնավորապես ուսումնասիրել էր անտիկ փիլիսոփաների և վաղ քրիստոնեական շրջանի մտածողների՝ Պլատոնի, Արիստոտելի, Պորփյուրոսի, Օլիմպիադորասի, Յամբլիխոսի, Նեմեսիոսի, Բարսեղ Կեսարացու և այլոց երկերը (տե՛ս **Аревшатян С., Лалафарян С.** Сочинение Иоанна Воротнеци «Об элементах», «**Յովհաննու Որոտնեցւոյ** Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց», քննական բնագիրը և առաջաբանը Ս. Արևշատյանի և Ս. Լալաֆարյանի, ռուս. թարգմանությունը Ս. Արևշատյանի, «Բանբեր Մատենադարանի», հ. 3, Եր., 1956, էջ 344):

[5] Տե՛ս **Ս. Ա. Զաքարյան,** Հովհան Որոտնեցի, Եր., 2017, էջ 79-80:

հեղինակել է «Մարդու բնության մասին» երկը: Հետազոտողների կարծիքով՝ այդ երկը գրվել է IV դարի վերջերին[6]: Այս ենթադրության համար հիմք է հանդիսացել այն, որ Նեմեսիոսը իր գրքում վերլուծում է «հերձվածողներ» Ապողինար Լաոդիկացու և Եվնոմիուսի հոգու մասին տեսակետները, սակայն քրիստոսաբանական ու մարդաբանական (օրինակ, կամքի ազատության) հարցեր քննարկելիս ոչինչ չի գրում 5-րդ դարի սկզբներին արևելաքրիստոնեական աշխարհի միտքը փոթորկած Եվտիքիոսի, Նեստորի և Պելագիոսի մասին:

Նեմեսիոսի երկը տարածված էր քրիստոնեական աշխարհում և որոշակի ազդեցություն է ունեցել թե՛ արևելյան (հունալեզու) և թե՛ արևմտյան (լատինալեզու) փիլիսոփայական՝ մարդաբանական, հոգեբանական ու բարոյագիտական մտքի զարգացման վրա: Նեմեսիոսի մասին առաջին տեղեկությունները հայտնի են 7-րդ դարի մտածողներ Մաքսիմ Խոստովանողի (580-662), Անաստասիա Սինաիտացու (630-700) և X դարի սիրիացի մտածող Մովսես Բար Ցեֆի «Դրախտի մասին» երկերից: Առանց անունը նշելու Նեմեսիոսի աշխատությունից օգտվել են Հովհան Դամասկացին, Հովհան Ֆիլիպոնը, վանական Մելիտիոսը և այլք: Նեմեսիոսի գիրքը լատիներեն առաջին անգամ թարգմանվել է 1080 թ. (թարգմանիչ՝ Ալֆանուս Սալերնացի), երկրորդ անգամ՝ 1153 թ. կամ 1165 թ. (թարգմանիչ՝ Բուրգունդիո Պիզանացի), իսկ առանձին գրքով հրատարկվել է 1565 թվականին Անտվերպենում: Լատինալեզու մտածողները (այդ թվում՝ Պետրոս Լոմբարդացին, Ալբերտ Մեծը, Թովմա Աքվինացին) օգտվել են Նեմեսիոսի երկից, սակայն սխալմամբ դրա հեղինակ են համարել Գրիգոր Նյուսացուն: Միջնադարում Նեմեսիոսի երկը թարգմանվել է նաև ասորերեն, արաբերեն և վրացերեն:

Նեմեսիոսի երկի տարածվածության հիմնական պատճառն այն էր, որ դա հանրագիտարանային բնույթի մի աշխատություն էր, որում քննարկվող հարցերի վերաբերյալ ներկայացված էին ինչպես անտիկ մտածողների՝ Պլատոնի, Արիստոտելի, ստոյիկների, նորպլատոնականների, Գալենի և այլոց (դրանց մի քանիսի, օրինակ, Կլեանֆոսի, Նումենիոսի, Ամոնիուս Սակկասի, Պորփյուրոսի երկերից բերված հատվածները պահպանվել են միայն Նեմեսիոսի գրքում), այնպես էլ քրիստոնյա մտածողների տեսակետները: Այդ երկը հարուստ էր մարդաբանական, հոգեբանական, ֆիզիոլոգիական, բժշկագիտական ու բարոյագիտական բնույթի գիտելիքներով, ինչը բացառիկ երևույթ էր ջատագովական ու հայրաբանական գրականության մեջ: IV-V դարերի հայրաբանական գրականության մեջ այնքան էլ մեծ ուշադրություն չէր դարձվում հոգեֆիզիոլոգիական հարցերին, մինչդեռ Նեմեսիոսի

[6] Տե՛ս **Владимирский Ф. С.** նշվ. աշխ., էջ 2-5, **Telfer W**. Cyril of Jerusalem and Nemesius of Emesa. Kentucky (Library of Christian Classics), 1955, էջ 204-211, **Холодов Е. В.** Представление Немесия Эмесского о свободе воли человека и Промысле Божием. 2013, էջ 3, https://azbyka.ru/otechnik/assets/uploads/books/13709/Немесий%20Эмесский%20о%20свободе%20воли%20и%20Промысле.pdf

գրքում դրանք զբաղեցնում են առաջնային տեղ: «Եւ զի վախճան մտաց Նեմեսիոսի ոչ միայն ճառել է զմարդոյ իբրև իմաստասէր և զքրիստոնեայ, - իրավացիորեն նկատում են Նեմեսիոսի երկի հայերեն տեքստի հրատարակիչները, - այլ յաւետ որպէս քննող հոգեբանական և նիւթական մարդկեղէն կազմածոյս, այսու մեծագոյն ևս օգտավէտ արժանիս բերէ յինքեան մատեանս ըստ մասին բնական գիտութեանց, զի խօսի զմարդոյ՝ նկատելով զնա էակ ի կարգի արարածական բնութեան, անկեալ ընդ ազդեցութեամբք ազգի ազգի հանգամանաց և յեղափոխութեանց՝ ընդհանուր և մասնաւոր օրինաց բնութեան, յորում ծնանի, զարգանայ և մեռանի»[7]:

Հայրաբանական մտքի պատմության մեջ Նեմեսիոսը զբաղեցնում է առանձնահատուկ տեղ այն իմաստով, որ առաջին անգամ տվել է մարդու մասին քրիստոնեական գիտության ընդհանուր պատկերը, մի ամբողջության մեջ միավորել մարդաբանությունը (ներառյալ հոգեբանությունը, ֆիզիոլոգիան և անատոմիան) տիեզերաբանության, փրկաբանության և քրիստոսաբանության հետ[8]: Ընդ որում, որպես կիրթ ու բանիմաց անձնավորություն, որպես անտիկ գիտությանն ու փիլիսոփայությանը քաջածանոթ մտածող՝ Նեմեսիոսը կարողացել է ոչ միայն հակիրճ ու պատշաճ մակարդակով ներկայացնել անտիկ ու քրիստոնյա մտածողների կարծիքները, այլև դրանք հմտորեն վերլուծել ու գնահատել և դրանով իսկ անտիկ աշխարհում ստեղծված մարդաբանական գիտելիքները փոխանցել միջնադարյան քրիստոնեական մշակույթին: Այն հետազոտողները, ովքեր Նեմեսիոսին համարում են էկլեկտիկ մտածող կամ փորձում նվազեցնել նրա ավանդը հայրաբանության մարդաբանական մտքի զարգացման մեջ, այնքան էլ իրավացի չեն, որովհետև, նախ, Նեմեսիոսի ոճը էկլեկտիկական[9] (բանաքաղածո) չէ, ոչ էլ պարզունակ հավաքաբանական, այլ հավաքաբանական-համադրական, երկրորդ, դա ամբողջական, կուռ կառուցվածք ու տրամաբանություն ունեցող աշխատություն է, որում քրիստոնեական կրոնի, հայտնութենական ճշմարտությունների տեսանկյունից իմաստավորված է անտիկ շրջանի մարդաբանական գիտելիքը: Ռուս հետազոտող Ֆ. Ս. Վլադիմիրսկին, թվարկելով Նեմեսիոսի ուսմունքի փիլիսոփայապատմական արժանիքները, իրավացիորեն նշում է, որ նա հանդես է գալիս որպես ընդհանրա-

---

[7] «Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ», Վենետիկ, 1889, էջ 6 (այսուհետև այս հրատարակությունից մեջբերումներ կատարելիս բուն տեքստում՝ փակագծերի մեջ, կնշվի միայն էջը):

[8] Տե՛ս **Шабуров Н. В**. Христианская антропология Немесия Емесского. В кн.: **Немезий Эмесский**. О природе человека. / Пер. с греч. Ф. С. Владимирского. Составление, послесловие, общая редакция М. Л. Хорькова. М., 1998:

[9] Տվյալ դեպքում նշանակություն ունի այն, թե Նեմեսիոսին էկլեկտիկ անվանողները «էկլեկտիկ» ասելով ինչ նկատի ունեն՝ տարբեր ուսմունքներ, գաղափարներ ու ոճեր մեխանիկորեն, անսկզբունքորեն մեկտեղողի՞ն, թե՞ որոշակի չափանիշներով ընտրող-համադրող մտածողին: Ըստ իս՝ եթե Նեմեսիոսին անվանենք էկլեկտիկ մտածող, ապա միայն «ընտրող-համադրող» իմաստով:

պես փիլիսոփայության, իսկ մասնավորապես քրիստոնեական մտքի պատմության մեջ համադրական ուղղության ներկայացուցիչ, ով կարողացել է հմտորեն ներդաշնակել անտիկ հեթանոսական փիլիսոփայությունը քրիստոնեական վարդապետության սկզբունքների հետ[10]:

Նեմեսիոսի երկը բաղկացած է 44 գլխից, որոնցում քննարկվում են հետևյալ թեմաները՝ ա) մարդու բնության մասին (գլ. 1), բ) հոգու բնության մասին (գլ. 2), հոգու և մարմնի միավորման մասին (գլ. 3), գ) մարդու մարմնի և դրա տարրերի մասին (գլ. 4-5), դ) հոգու զորությունների ու տեսակների, զգայությունների, հոգու և մարմնի գործողությունների ու վիճակների, ֆիզիոլոգիական գործընթացների, ուրախության, տրտմության, երկյուղի, կամավորի և պատահականի և այլնի մասին (գլ. 6-34), ե) կամքի ազատության, ճակատագրի և նախախնամության մասին (գլ. 35-44): Նեմեսիոսի աշխատության բովանդակության ներկայացումից արդեն իսկ ակնհայտ է, որ նրա մտածումների առանցքում մարդն է՝ արարված տիեզերքում նրա կարգավիճակի, բնության կազմության, իմացական ու գործնական կարողությունների ու հնարավորությունների, նրա վարքի դրդապատճառների ու կարգավորման սկզբունքների, ինքնիշխանության, ընտրության ու աստվածային նախախնամության, նրա կյանքի իմաստի ու նպատակի վերաբերյալ փիլիսոփայական դատողություններով: Այս թեմաների ու հարցերի քննարկումների ընթացքում նա ներկայացնում է անտիկ մտածողների տեսակետները, դրանք ընտրում, վերլուծում և գնահատում Ս. Գրքի ու քրիստոնեական վարդապետության չափանիշներով:

Նեմեսիոս Եմեսացի և Հովհան Որոտնեցի: Ինչպես վերը նշվեց, Նեմեսիոսի աշխատությունը՝ վերագրված Գրիգոր Նյուսացուն, մեծ ազդեցություն է ունեցել միջնադարյան, հատկապես XIII-XIV և XVII-XVIII դարերի հայ փիլիսոփայական՝ մարդաբանական ու բարոյագիտական մտքի զարգացման վրա: Նեմեսիոսի երկից լիուլի օգտվել է նաև Հովհան Որոտնեցին, ինչը հատկապես նկատելի է հայ մտածողի «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա»[11], «Արդարութիւն Տեառն ուղիղ է եւ ուրախ

---

[10] Տե՛ս **Владимирский Ф. С.,** նշվ. աշխ., էջ 16, 442-444: Անշուշտ, կան հետազոտողներ, ովքեր, ինչ-ինչ չափանիշներից ելնելով, ավելի համեստ են գնահատում Նեմեսիոսին: Օրինակ, ռուս նշանավոր գիտնական Ա. Ֆ. Լոսևը, անտիկ գեղագիտության պատմությանը նվիրված իր հիմնարար հետազոտությունում հանգամանորեն չվերլուծելով Նեմեսիոսի երկը (նա ընդամենը նորպլատոնականության Ալեքսանդրյան դպրոցի համատեքստում թռուցիկ խոսում է մարդու կամքի ազատության նեմեսիոսյան ըմբռնման մասին), Նեմեսիոսի դատողությունները համարում է խելամիտ, սակայն զուրկ հասկացութային համակարգի խիստ կիրարկումից և ոչ միշտ համոզիչ (տե՛ս **Лосев А. Ф**. История античной эстетики. Итоги тысячелетнего развития, Т. 8, Кн. 1, Ч. 1 (Александрийский и восточный раннехристианский неоплатонизм), М., 2000, էջ 18):

[11] «Եռամեծի եւ երիցս երանեալ բազմերջանիկ եւ տիեզերալոյս մեծ հռետորի եւ անյաղթ փիլիսոփայի հայոց մեծաց Յովհաննու Որոտնեցւոյ արարեալ մեկնութիւն բանին, որ ասէ. «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա», **Ս. Հովհան Որոտնեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, Քննական բնագրերը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մինասյանի), Ս. Էջմիածին, 2009, էջ 69-118(այսուհետև այս հրատարակությունից մեջբերումներ կատարելիս բուն տեքստում՝ փակագծերի մեջ, կնշվի միայն էջը):

առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են եւ լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է եւ մնայ յաւիտեան»[12], «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են»[13] և աստվածաբանական-իմաստասիրական այլ ճառերում:

Թե ինչու է Որոտնեցին հատկապես օգտվել Նեմեսիոսի երկից, կարելի է անել հետևյալ ենթադրությունը. նախ, Որոտնեցու գիտաուսումնական գործունեության հիմնական ուղղություններից մեկը անցյալի հայ հոգևոր ժառանգության վերահիմաստավորումն էր ու տեսական-փիլիսոփայական բնույթի աղբյուրները շրջանառելը: Իսկ դրա առիթը միաբարական շարժման դեմ գաղափարական-դավանաբանական պայքարն էր: Ծանոթանալով միաբարական շարժման ներկայացուցիչների (Բարդուղիմեոս Բոլոնիացի, Պետրոս Արագոնացի) ու արևմտաեվրոպական սքոլաստիկ մտածողների (Ալբերտ Մեծ, Թովմա Աքվինացի և այլք) աշխատություններին, նա տեսնում է, որ դրանցում այս կամ այն հարցի վերաբերյալ ըստ հարկի ներկայացված են անցյալի մտածողների կարծիքները, ընդ որում՝ այնպիսի մտածողների ու եկեղեցու վարդապետների, որոնց փիլիսոփայական բնույթի երկերը հայերեն են թարգմանվել վաղ միջնադարում, սակայն ինչ-ինչ պատճառներով չեն գտնվել լայն շրջանառության մեջ (այսինքն՝ ըստ էության չեն մեկնաբանվել ու չեն դարձել աստվածաբանական-փիլիսոփայական գիտելիքի բաղկացուցիչ մաս): Որոտնեցին փոխ է առնում միաբարականների իմաստասիրման սքոլաստիկական ոճը, դրանցում կիրառված մեկնողական հնարքները, բայց իբրև հեղինակավոր աղբյուրներ՝ օգտագործում վաղուց հայերեն թարգմանված և հայոց եկեղեցու կողմից ընդունված մտածողների ու վարդապետների երկերը: Դրանց թվում է նաև Գրիգոր Նյուսացուն վերագրված՝ Նեմեսիոսի «Մարդու բնության մասին» երկը: Երկրորդ, ինչպես վերը նշվեց, Նեմեսիոսի երկը հանրագիտարանային բնույթ ուներ և հարուստ տեղեկույթ էր տալիս անտիկ և քրիստոնեական մարդաբանական-բարոյագիտական պատկերացումների մասին: Եթե Որոտնեցին, մեկնելով Արիստոտելի երկերը, մեկնաբանության (վերաշարադրության, պարզաբանության) ձևով է իր վերաբերմունքը ցուցաբերում Ստագիրացու փիլիսոփայական մտքերի նկատմամբ[14], ապա այս դեպքում նա ոչ թե մեկնաբանում, այլ պարզապես օգտագործում է Նեմեսիոսի աշխատության նյութերը՝

---

[12] «Յովհաննու Որոտնեցւոյ քաջ հետորի եւ արդիւնաբան բաբունապետի, արարեալ ի բան մարգարէին, որ ասէ. «Արդարութիւն Տեառն ուղիղ է եւ ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են եւ լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է եւ մնայ յաւիտեան», **Ս. Հովհան Որոտնեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, էջ 203-236:

[13] «Յովհաննու Որոտնեցւոյ ասացեալ ի բան մարգարէին Դավթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են», **Ս. Հովհան Որոտնեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, էջ 119-182:

[14] Արիստոտելի ուսմունքի նկատմամբ Հովհան Որոտնեցու վերաբերմունքի մասին տե՛ս **Ա. Ա. Մինասյան,** Հովհան Որոտնեցին Արիստոտելի երկերի մեկնիչ, Եր., 2004, էջ 130-131:

իր ասելիքը հիմնավորելու, փաստարկված ներկայացնելու և քննարկվող նյութի մասին ամբողջական պատկերացում ստեղծելու նպատակով: Ի դեպ, ի տարբերություն Նեմեսիոսի, նա ընտրողաբար և բավականին հակիրճ է ներկայացնում այս կամ այն հարցի վերաբերյալ անտիկ և քրիստոնյա մտածողների կարծիքները և առանց մանրամասնելու՝ անմիջապես շարադրում է քննարկվող կարծիքը հերքող կամ հաստատող փաստարկներ: Որոտնեցին, մեջբերելով մտքեր Նեմեսիոսի երկից, ավելի հաճախ չի հիշատակում նրա անունը, բայց երբեմն անվանում է (տեքստում՝ Գրիգոր Նյուսացի)[15]: Օրինակ, շարադրելով հոգու անմարմին լինելու դրույթի օգտին բերվող փաստարկները, նա գրում է, թե «ամենայն մարմին իւր պարունակութիւն ունի, իսկ հոգի ոչ պարունակի, այլ պարունակէ զմարմինն, որպէս ասէ Գրիգորիոս ի ճառս միաւորութեան հոգւոյ և մարմնոյ…» (էջ 110, հմմտ. Նեմեսիոս, էջ 54): Կամ՝ քննադատելով այն կարծիքը, ըստ որի՝ հոգին ջուր է, որի առկայությունը կենդանացնում, իսկ բացակայությունը չորացնում (մեռցնում) է, Որոտնեցի գրում է. «Առ որս ասեմք. բազում են կենդանիք, որպէս ասէ Գրիգոր Նիւսեայ, զկաքաւէ և զոմանց արծուեաց թէ ջուր ոչ ըմպեն՝ և են կենդանիք» (էջ 77, հմմտ. Նեմեսիոս, էջ 30): Իսկ երբ օգտվում է Գրիգոր Նյուսացու «Մարդու կազմության մասին» աշխատությունից, ապա հաճախ նշում է, թե որ գլխից (ճառից) է վերցված տվյալ միտքը: Օրինակ, քննարկելով հոգու և մարմնի ծագումնաբանության (առաջնայնության) հարցը, Որոտնեցին գրում է. «Իսկ Գրիգորիս ոչ թէ ի ծածուկ, այլ յայտնապէս հրատարակէ և գոչէ ի գիրս Կազմութեան երեսուն և մի ճառն, թէ՝ մի՛ յառաջագոյն դնել զայլ այլոց, քանզի ոչ յառաջ քան զմարմինն ասէ գոյանալ զհոգիսն, և ոչ յառաջ քան զհոգիսն՝ զմարմինսն» (էջ 108)[16]:

Որոտնեցին տարբեր կերպ է վերաբերվում Նեմեսիոսի երկին. ա) նա գրեթե նույնությամբ կրկնում է Նեմեսիոսի մտքերը հատկապես այն դեպքերում, երբ շարադրում է այս կամ այն հարցի վերաբերյալ որևէ մտածողի կարծիք կամ երբ ներկայացնում է որևէ հասկացության բովանդակություն: Օրինակ, Որոտնեցին գրեթե բառացիորեն կրկնում է Նեմեսիոսին, երբ ներկայացնում է թե՛ հոգու վերաբերյալ արիստոտելյան տեսակետը և թե՛ դրա քննադատությունը (տե՛ս Նեմեսիոս, էջ

[15] Հարկ է նշել, որ Որոտնեցու տեքստերում մեջբերումներ կան հենց Գրիգոր Նյուսացու երկերից, ուստի սխալ կլիներ յուրաքանչյուր դեպքում տեքստի «Գրիգորիոս» անունը նույնացնել Նեմեսիոսի հետ (խոսքը ոչ թե այն դեպքերի մասին է, երբ Որոտնեցին անմիջականորեն հղում է Նյուսացու երկին՝ նշելով դրա վերնագիրը, այլ երբ այդ հիշատակումը բացակայում է):

[16] Այս կապակցությամբ Գրիգոր Նյուսացին գրում է. «Ապա ոչ զոգի յառաջ քան զմարմին, եւ ոչ առանց ոգւոյ զմարմին ճշմարիտ է ասել, այլ մի երկոցունց սկիզբն ըստ բարձրագոյն բանին յառաջնում Աստուծոյ կամաւքն սկիզբն արկեալ եւ ըստ այլում՝ ի ծննդեանն պատճառս գոյացուցեալ» (**Ս. Գրիգոր Նյուսացի**, Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն (Յաղագս կազմութեան մարդոյ), Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Վարդանյանի, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, էջ 190):

38-41, Որոտնեցի, էջ 81-83): «**Զգայություն**» հասկացությունը Նեմեսիոսը հետևյալ կերպ է մեկնաբանում. «Եւ կոչի յոլովակի զգայութիւնն և զգայարանք. և է զգայութիւնն ընդունակ զգալեացս. բայց թուի այս սահմանն՝ ոչ է սորա գոլ զգայութեանցս, այլ գործեաց սորա. վասն որոյ և այսպէս սահմանէն զզգայութիւնն. հոգի իմանալի, յիշխանականէն ի գործարանս կոյս կարգեալ: Եւ է այսպէս զօրութիւն անձին՝ ընդունակ զգալեացս, իսկ զգայարանք՝ գործարան ընդունելութեան զգալեացս: Բայց Պղատոն ասէ զզգայութիւնն՝ անձին և մարմնոյ կցորդութիւն առ արտաքոյսն. քանզի զօրութիւն՝ անձին, և գործարան՝ մարմնոյ, և երկոքին ի ձեռն տեսութեան իմն՝ ընդունական որոց արտաքուստ են» (էջ 71): Որոտնեցին «Արդարութիւն Տեառն ուղիղ է եւ ուրախ առնէ զսիրտս…» ճառում գրեթե կրկնում է Նեմեսիոսի բացատրությունը. «**Զգայութիւն է ընդունակ զգալեաց: Բայց թուի այս սահման ոչ է զգայութեան, այլ գործեաց սորա, վասն որոյ ոմանք յիմաստասիրացն այսպէս սահմանեն՝ հոգի իմանալի իշխանականէն ի գործարանս կոյս կարգեալ, և այսպէս՝ զօրութիւն անձին ընդունակաց զգալեաց, իսկ զգայարանք՝ գործարան ընդունելութեան զգալեաց: Իսկ Պղատոն զգայութիւն սահմանէ անձին և մարմնոյ կցորդութիւն առ արտաքոյսն, քանզի զօրութիւն անձին և գործարան մարմնոյ՝ երկոքին ի ձեռն տեսութեան իմն ընդունական լինին որոց արտաքուստն**» (էջ 230):

բ) Ավելի հաճախ Որոտնեցին համառոտագրում-կրճատում և հակիրճ ձևով է ներկայացնում Նեմեսիոսի մտքերը կամ բաց է թողնում բնագրի այն հատվածները, որոնք տվյալ դեպքում ինչ-ինչ պատճառով իրեն չեն հետաքրքրում: Օրինակ, նախախնամության գոյության փաստարկներից մեկը Նեմեսիոսի երկում ներկայացված է բավականին ծավալուն տեսքով. «Ո՞վ ոք տեսանելով զկերպից մարդկան փոփոխումն յայնչափ բեւրս, և ոչ ուրէք անգանել ի միմեանս, ոչ սքանչանայցէ ընդ գործն: Զմտաւ ածեալ զպատճառն՝ գտցէ նախախնամութեան սակս զտարբերութիւն կերպիցն՝ այլ և այլ իւրաքանչիւր ուրուք: Քանզի տե՛ս, զի եթէ նոյն կերպարան պահէր ամենեցունց՝ անվրէպ նմանութեամբ, որքան ինչ շփոթումն իրաց լինէր. որքան անգիտութիւն և խաւար ունէր զմարդն՝ ոչ զիւր ճանաչելով և ոչ զօտարն, կամ զթշնամին կամ զվատթարն ի սիրելոյն և ի պիտանոյն որոշել, քանզի ամենայն ինչ լինէր ճշմարտապէս խառնակ իր, ըստ Անաքսագորայ: Եւ այսօրիկ այսպէս գոլով՝ ոչ ինչ արգելոյր ընդ քերց կամ ընդ մարց լինել, և յափշտակել և ոչ այլ ինչ չար գործել յայտնապէս, թէ առժամն միայն խոյս տայր. քանզի ոչ ոք զնա ճանաչէր յետ այնօրիկ: Ոչ արդեօք ոչ օրէնք և ոչ քաղաքավարութիւն կարգիւր. ոչ հարք և ոչ որդիք զմիմեանս գիտէին, և ոչ այլ ինչ էր հաստատուն մարդկան, քանզի որպէս կոյր իմն լինէր մարդն, բայց միայն ի հասակէ և ի մեծութենէ՝ այլ ոչ ինչ ճանաչիւր: Այսքան բարութեան եղև մեզ պատճառ նախախնամութեան, զանազանելով զկերպարանս մարդկան հանապազ, և ամենայն ուրէք և ոչ

ի միում ժամանակի յառնելոյն զայս նուազեալ» (էջ 147-148): Որոտնեցին համառոտում է և ավելի հստակ ու հակիրճ ներկայացնում նեմեսիոսյան փաստարկի էությունը. **«Զի ի մի և նոյն տեսակ այսքան թիւ բազմութիւն անհատից ծնանին և ոչ նմանին միմեանց կերպարանօք կամ ձայնիւ. զոր թէ ոչ էր այսպէս կազմեալ նախախնամութիւնն Աստուծոյ՝ բազում և անթիւ չարիս սերմանեալ լինէր, ընդ մայրս և ընդ քերցս անկանել, և ոչ կարէին ճանաչել զհայր կամ զմայր, և ոչ լինէր ընտրութիւն չարի և բարւոյն, և այլ բազում ոճիրս գործեցեալ լինէր առանց ընտրութեան»** (էջ 103):

գ) Երբեմն Որոտնեցին Նեմեսիոսի միտքը խմբագրում-վերաձևակերպում է, իր հայեցողությամբ անում բնագրային հատվածների տեղափոխություններ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տեքստը լրացնում սեփական կամ աստվածաշնչյան և այլ մտածողների մտքերով: Այսպես, Որոտնեցին կրկնում է չորս տարրերի, դրանց որակների, տարրերի միավորման մեխանիզմների վերաբերյալ Նեմեսիոսի մտքերը, սակայն դրանք լրացնում է նոր հարցադրումներով ու պատասխաններով: Օրինակ, ի տարբերություն Նեմեսիոսի, նա «տարրի» սահմանումից հետո բացատրում է, թե ինչու է կոչվում տարր, կամ պարզաբանում է, թե ինչու են տարրերը չորսը և ոչ ավել կամ պակաս: Նա առաջադրում է բնափիլիսոփայական, բարոյագիտական, խորհրդանշանական, կրոնաաստվածաբանական բնույթի փաստարկներ, որոնք, ի վերջո ամփոփ ներկայացնում է հետևյալ կերպ. «**Եւ զայս ասէր կա՛մ վասն չորից տարերց՝ զի ծնօղ են ամենայն գոյից, կա՛մ վասն չորից առաքինութեանց, և կա՛մ վասն չորից կողմանց աշխարհի, և կա՛մ վասն չորս թուոց՝ զի լինին ծնօղ ամենայն թուոց: Որ և ի մերս պատուեցաւ քառաբուղխ վտակօք յԵդեմայ, և քառադէմ կառօքն՝ յոր բազմեալ ետես զՏէր Եզեկիէլ, և վասն քառից աւետարանչացն**» (էջ 135):

Թե Որոտնեցին որքան խորն է ուսումնասիրել ու յուրացրել Նեմեսիոսի երկը, երևում է նաև այն բանից, որ Նեմեսիոսի երկի որոշ կարևոր մտքեր, մասամբ տարբեր ձևակերպումներով, նա օգտագործում է իր տարբեր ճառերում: Օրինակ, Նեմեսիոսի գրքի 17-րդ գլխում («Յաղագս ցանկականին») հոգու ախտերի մասին կարդում ենք հետևյալը. «**Եւ լինին չարքն ախտք անձին՝ ի ձեռն յերիցս այսոցիկ. ի չար հրահանգից, յանուսումնութենէ և ի չար ունակութենէ: Քանզի ոչ բարւոք վարժեալք ի մանկութենէ՝ որպէս զի կարող գոլ յաղթկու լինել ախտիցն, յանչափութիւն նոցա անկանիմք: Իսկ յանուսումնութենէ՝ չար դատումն բուսեալ ի խոհեցողականին անձին, որպէս զի կարծել զչարսն պիտանիս գոլ, և զպիտանիսն չարս: Լինին ինչ և ի մարմնոց չար ունակութենէ, քանզի բարկացողք են դառնամաղձոտքն, և վայրաբերք՝ որ ջերմ են և խոնաւուտ խառնուածովն: Եւ բժշկելի է զչար սովորութիւնն՝ սովորութեամբ բարեաւ, իսկ զանուսումնութիւնն՝ ուսմամբ և մակացութեամբ, իսկ զչար ունակութիւնն՝ ողջացուցանելի է մարմնապէս, փոխադրելով**

զնա, որպէս կարողութիւն ի միջինն խառնուած՝ պատրաստութեամբ և կրթութեամբ և դեղովք, թե և այսոցիկ պէտք լինիցին» (էջ 91-92):

«Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա» ճառում խոսելով հոգու ախտերի մասին Որոտնեցին գրում է. «**Եւ սոքա չորեքեան ախտք են հոգւոյ, վասն որոյ զախտ ի չորս բաժանեն իմաստասէրքն՝ ի ցանկութիւն, ի հեշտութիւն, յերկիւղ և ի տրտմութիւն: Եւ սոքա ի յերից պատճառաց գոյանան՝ ի չար խառնուածոց, ի չար հրահանգից և յանուսումնութենէ: Եւ զի ի չար խառնուածոց որպէս այնք, որ ջերմ են և խոնաւուտ խառնուածով վայրաբերք են և գիջասէրք: Իսկ ի չար հրահանգից՝ զի ի մանկութենէ չարաց յարակցեալ՝ ուսեալ զչար գործն, ոչ կարեն յաղթկու լինել չար սովորութեանց: Իսկ յանուսումնութենէ՝ չար դատումն բուսեալ ի խոհեցողականն անձին, կարծել, զչարս պիտանիս գոլ: Որոյ բժշկելի է զխառնուածն՝ դեղօք, ի չար սովորութիւնն՝ սովորութեամբ, իսկ յանուսումնութիւնն՝ ուսմամբ և մակացութեամբ»** (էջ 90-91):

Իսկ «Արդարութիւն Տեառն ուղիղ է եւ ուրախ առնէ զսիրտս…» ճառում նույն միտքը Որոտնեցին ձևակերպել է հետևյալ կերպ. «**Ախտ ի չորս տրամատի՝ ի ցանկութիւն և ի հեշտութիւն, յերկիւղ և ի տրտմութիւն: Իսկ բարի և չար ասեմք կա՛մ զարդարն էսն, կա՛մ կարծեցեալսն: Եւ լինի չար ախտք անձինն յերից՝ ի չար հրահանգից և յանուսումնութենէ և ի չար ունակութենէ: Ի չար հրահանգից՝ իբր ոչ բարիոք վարժեալք ի մանկութենէ, որպէս զի կարող գոլ յաղթող լինել ախտից, յանչափութիւն նոցա անկանիմք: Իսկ յանուսումնութենէ չար դատումն բուսեալ ի խոհեցողական անձին, մինչ զի կարծել զչարն պիտանի, և պիտանի չար: Լինի և ի մարմնոյ չար ունակութեանց խառնուածոց չարն, քանզի բարկացողք են դառնամաղձեայքն և վայրաբերք, որ ջերմ են և խոնաւուտ խառնուածոք: Եւ բժշկելի է ի չար սովորութիւնն՝ սովորութեամբ, իսկ զանուսումնութիւնն՝ ուսմամբ և մակացութեամբ, իսկ չար ունակութիւնն՝ ի ձեռն դեղոց փոխադրելի է ի միջին խառնուած»** (էջ 221-222):

Նեմեսիոսի երկի ազդեցությունը նկատվում է Որոտնեցու տարբեր, հատկապես այն աշխատություններում, որոնցում դիտարկվում են ինչպես մարդաբանական՝ բարոյագիտական ու հոգեբանական, այնպես էլ բնափիլիսոփայական հարցեր[17]: Որոտնեցու փիլիսոփայա-

[17] Օրինակ, այդպիսի գործերից է «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա» ճառը, որում Որոտնեցին հիմնականում քննարկում է ինչպես հոգու բնության, հոգու և մարմնի հարաբերակցության, այնպես էլ հոգուն առնչվող աստվածային նախախնամության ու մարդու անձնիշխանության հարցեր: Որոտնեցին այդ ճառում օգտվում է հատկապես Նեմեսիոսի երկի 2-րդ («Հոգու մասին»), 6-րդ («Յաղագս տեսողականի»), 19-րդ («Յաղագս տրտմութեան»), 21-րդ («Յաղագս երկիւղի»), 39-րդ («Յաղագս որ ի մեզն է առնել, որ է՝ անձնիշխանութիւն»), 41-րդ («Թէ վասն զինչ պատճառի անձնիշխան եղեաք»), 42-րդ («Յաղագս նախախնամութեան»), 43-րդ («Յաղագս թէ զի՞նչ է նախախնամութիւն»), 44-րդ («Յաղագս թէ ոյց է նախախնամութիւն») գլուխներից: Իսկ «Արդարութիւն Տեառն ուղիղ է եւ ուրախ առնէ զսիրտս…» ծավալուն ճառում աստվածաշնչյան մտքերը հիմնավորելիս նա, հետևելով «բնական իմաստասիրաց ոճոյ», հիմնականում օգտվում է Նեմեսիոսի երկի 15-րդ («Այլազգ տարորոշումն անձին»), 16-րդ («Յաղագս անբանին մասին անձին…»), 17-րդ

կան աշխարհայացքի վրա Նեմեսիոսի երկի գործած ազդեցությունը ցույց տալու համար ներկայացնեմ մի քանի հարցի՝ հոգու բնության, մարդու անձնիշխանության և տարրաբանության վերաբերյալ Նեմեսիոսի և Որոտնեցու հայացքների նմանությունները և շարադրանքի ու ձևակերպումների ընդհանրությունները:

Հոգու բնության հարցը: Իր երկի թերևս ամենածավալուն՝ «Հոգու մասին» գլխում Նեմեսիոսը քննարկում է հոգու բնության մասին բազում կարծիքներ, որոնք Որոտնեցին[18] լրացնելով բաժանում է տասը խմբի, որոնց մեծ մասի քննության ժամանակ նա հիմնականում օգտվում է Նեմեսիոսի երկից, հատկապես այն դեպքերում, երբ շարադրում է անտիկ և քրիստոնյա մտածողների տեսակետները: Օրինակ, Նեմեսիոսը իր երկի 15-րդ գլխում («Այլազգ տարորոշումն անձին») գրում է, որ տարբեր մտածողներ հոգու կազմության հետ կապված առանձնացնում են հոգու զորություններ կամ տեսակներ կամ մասեր. «Տարորոշեն և այլազգ՝ ի զօրութիւնս կամ ի տեսակս և կամ ի մասունս՝ զանձն. ի տնգական, որ և սննդական և կրականն կոչի, և ի զգայական, և ի բանական: … Իսկ Զենոն Ստոյիկեան ութամասնի ասէ գոլ զանձն, տարորոշելով զնա՝ յիշխանականն և ի հինգ զգայութիւնսն և ձայնական և ի սերմնականն: Իսկ Պանետիոս իմաստասէր՝ զձայնականն՝ ըստ մարմնական յարձակմանն շարժութեան մասն գոլ ախորժէ, ասելով ուղղակի, իսկ զսերմնականն՝ ոչ անձին մասն, այլ ի բնութենէ: Բայց Արիստոտելէս ի Բնաւորականսն հինգ գոլ ասէ զմասունսն անձին, զտնկականն և զզգայականն, և զշարժողականսն ըստ տեղւոյ, և զհարկաւոր ցանկականն և իմացողականն:…Իսկ ի Բարոյականսն՝ ի յերկուս յառաջինսն և ի սեռականագոյնսն անջատէ զանձն, ի բանականն և յանբանն. և որոշէ զանբանն՝ ի հաւանականի և յոչ հաւանականն բանի» (էջ 87-88): Որոտնեցին կրկնում է Նեմեսիոսի միտքը. **«Գիտելի է, զի ոմանք յիմաստասիրացն բաժանեն զհոգին ի յերիս՝ ի տնկական, ի զգայական և ի բանական: Եւ սոյնք, որ զայս ասեն, ոմանք իբրև զտեսակ առ անձին դնեն, և ոմանք իբրև զօրութիւն, և ոմանք իբրև մասունք: Իսկ Զենոն ստոյիկեան ընդ մասնեայ** (պետք է լինի՝ ութամասնեայ – Ս. Զ.) **ասէ գոլ զանձն՝ տարորոշելով յիշխանականն, հինգ զգայութիւն, ձայնականն և սերական: Իսկ Պանէտիոս իմաստասէրն ընդդիմաբանէ նմա քաջապէս և յիրաւի. զձայնականն մասն գոլ ասէ ըստ մարմնական յարձակման շարժութեան, իսկ սերմականն ոչ անձին մասն, այլ բնութեան: Իսկ Արիստոտէլ թէպէտ ի բնաւորական քննութիւնն հինգ գոլ ասէ զմասունս անձին՝ զտնկականն, և զզգայականն և զշարժականն ըստ տեղոյ, զհարկաւոր ցանկականն և յիմացողականն, իսկ ի բարոյականսն յերկուս բա-**

(«Յաղագս ցանկականին»), 18-րդ («Յաղագս հեշտութեանց»), 19-րդ («Յաղագս տրտմութեան»), 20-րդ («Յաղագս սրտմտութեան»), 21-րդ («Յաղագս երիկիւղի») գլուխներից:

[18] Հովհան Որոտնեցու հոգեբանական հայացքների վերլուծությունը տե՛ս **Գ. Հ. Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 109-136, **Ս. Ա. Զաքարյան,** նշվ. աշխ., էջ 71-111:

ժանէ՝ ի բանական և յանբան: Իսկ Պղատոն եռամասնեայ ասէ զոլ զհոգին՝ բան, ցասումն և ցանկութիւն» (էջ 220-221):

Հետևելով Նեմեսիոսին՝ Որոտնեցին մերժում է հոգու մասին նյութապաշտական ու հերձվածողական տեսակետները՝ կարծելով, որ հոգին ինքնաբավ, անմարմին, անմահ, մշտաշարժ, բանական ու անձնիշխան գոյացություն է: «Հոգին մարմին (մարմնական) չէ» տեսակետը հերքելու համար Որոտնեցին առանձնացնում է տասնյոթ փաստարկ, որոնք նա հիմնականում քաղել է Նեմեսիոսի երկից, սակայն շարադրել է ըստ իր հայեցողության[19]: Քանի որ հոգու բնությանն առնչվող հարցերի քննարկման ժամանակ Նեմեսիոսի երկի ազդեցությունը Որոտնեցու հայացքների վրա ակնառու է (համընկնումները բազմաթիվ են), ուստի բավարարվենք մեկ կարծիքի («հոգին մարմին չէ») դեմ բերվող երկու փաստարկի համեմատական ներկայացմամբ:

ա) **Նեմեսիոս՝** «Եւս՝ ամենայն մարմին կա՛մ արտաքուստ շարժի կա՛մ ի ներքուստ. Այլ եթէ արտաքուստ՝ անանձն է, իսկ եթէ ի ներքուստ՝ անձնաւոր. Իսկ եթէ մարմին է անձն, եթէ արտաքուստ շարժի՝ անանձն է, իսկ եթէ ի ներքուստ՝ անձնաւոր. Անտեղի է և՛ անձնաւոր և՛ անանձն ասել զանձն. Ոչ ուրեմն է մարմին անձն» (էջ 28-29):

Որոտնեցի՝ «Ամենայն մարմին կամ արտաքուստ շարժի կամ ի ներքուստ: Իսկ թէ արտաքուստ՝ անանձն է, իսկ թէ ի ներքուստ՝ անձնաւոր: Իսկ թէ մարմին է անձն և արտաքուստ և ի ներքուստ շարժի՝ լինի միևնոյնն ի ներքուստ անձնաւոր և արտաքուստ անանձն. անտեղի է զմի իր անձնաւոր և անանձն ասել՝ ո՛չ ուրեմն է մարմին անձն» (էջ 78):

բ) **Նեմեսիոս՝** «Իսկ Քռիւսիպոս ասէ. Մահ՝ է որոշումն անձին ի մարմնոյ. և ոչինչ անմարմին ի մարմնոյ որոշի, քանզի և ոչ հպի ի մարմին անմարմինն, իսկ անձն և հպի և որոշի ի մարմնոյ. ոչ ուրեմն է անմարմին՝ անձն: Յայսցանէ մահու լինել որոշումն անձին ի մարմնոյ՝ ճշմարիտ է, բայց ոչ հպել անմարմնոյ ի մարմին՝ սուտ է ամենևին ասացեալն. բայց ի վերայ անձին ճշմարիտ է: Եւ է սուտ՝ վասն զի գիծ անմարմին գոլով՝ հպի ի մարմին և որոշի. նոյնպէս և սպիտակութիւն» (էջ 32):

Որոտնեցի՝ «Ասէ Քռիսիպոս՝ մահ է որոշումն հոգւոյ ի մարմնոյ, և ոչինչ անմարմին ի մարմնոյ որոշի, իսկ անձն հպի և որոշի՝ ո՛չ ուրեմն է անմարմին անձն: Առ որս ասեմք, թէ որոշումն հոգւոյ ի մարմնոյ ճշմարիտ է, բայց ոչ հպել անմարմնոյ ի մարմին, սուտ է ամենևին, քանզի գիծ քանակ գոլով անմարմին՝ հպի ի մարմինն և որոշի, այսպէս և սպիտակութիւն անմարմին գոլով՝ հպի ի մարմին և որոշի» (էջ 79):

Այս կերպ, վերաշարադրելով Նեմեսիոսի երկից վերցրած տարբեր փաստարկներ, Որոտնեցին հիմնավորում է քրիստոնեական վարդապետության առանցքային այն գաղափարը, որ հոգին ոչ թե մարմնա-

---

[19] Ավելորդ չէ նշել, որ նույն ճառում Որոտնեցին, քննարկելով նաև «հոգին անմարմին է» դրույթը, առաջադրում է տասներեք փաստարկ, որոնց մի մասը Նեմեսիոսի մտքերի ազատ ու հակիրճ վերաշարադրանքն է (տե՛ս էջ 109-111):

կան, այլ անմարմին, աննյութական գոյ է:

Կամքի ազատության հարցը: Նեմեսիոսը հետևողականորեն պաշտպանում է մարդու կամքի ազատության գաղափարը՝ կարծելով, որ անձնիշխանությունը բանական էակի անկապտելի հատկությունն է: Իր գրքի 39-րդ գլխում Նեմեսիոսը անձնիշխանության վերաբերյալ ձևակերպում է երեք հարց. ա) գոյություն ունի՞ անձնիշխանություն, այսինքն՝ ինչ-որ բան գտնվո՞ւմ է մարդու իշխանության ներքո, բ) ի՞նչ է գտնվում մարդու իշխանության ներքո կամ ինչի՞ նկատմամբ մարդ ունի իշխանություն, գ) ինչո՞ւ է Աստված մարդուն ստեղծել անձնիշխան:

Մարդու անձնիշխանության հարցում Որոտնեցին ամբողջությամբ հետևում է Նեմեսիոսին՝ վերաշարադրելով թե՛ նրա հարցադրումները և թե՛ պատասխանները: Հոգու անձնիշխանությունը պայմանավորված է մարդու բնույթով, ավելի ստույգ՝ բանականությամբ, քանի որ **«ի հարկէ ընդ բանականութեան մտանէ անձնիշխանութիւնն»** (էջ 111): Բանական (հայող, խորհող և ըստ այդմ՝ գործող) էակը, շեշտում է Նեմեսիոսը, անհրաժեշտաբար անձնիշխան է, հետևաբար՝ իր գործերի ու արարքների տերն ու տնօրենը. «Արդ, հարկ է ամենայնիւ՝ որ ունի զխորհելն՝ և տէր գործոցն զոլ, քանզի եթէ տէր ոչ իցէ գործոցն՝ աւելորդ ունի զխորհելն. և եթէ այս՝ ի հարկէ առ բնաւորի բանականին անձնիշխանականն. քանզի կա՛մ ոչ եղիցի բանական, և կամ բանական զոլով՝ տէր եղիցի գործոցն, և տէր զոլով գործոցն՝ ամենայն իրօք և անձնիշխան եղիցի:...Յերկոցունց ուրեմն ժողովի՝ մարդոյն ի հարկէ անձնիշխան և փոփոխելի զոլ. Փոփոխելի՝ վասն զի եղական է, իսկ անձնիշխան՝ վասն զի և բանաւոր» (էջ 141): Որոտնեցին բառացիորեն կրկնում է Նեմեսիոսին. **«Արդ, հարկ է ամենայնիւ, որ ունի զխորհելն՝ և տէր գործոցն զոլ, քանզի տէր ոչ իցէ գործոյն աւելորդ ունի զխորհելն: Եւ եթէ այս ի հարկէ առ բնաւորեցաւ բանականին՝ տէր զոլ գործոց, այսինքն՝ անձնիշխան, քանզի կա՛մ ոչ եղիցի բանական, և կա՛մ թէ բանական եղիցի՝ տէր եղիցի գործոց, և տէր զոլով գործոց՝ ամենայն իրաւք անձնիշխան եղիցի: Յերկոնցունց ուրեմն ժողովի ի մարդոյն՝ ի հարկէ անձնիշխան զոլ և փոփոխելի, վասն զի եղական է անձնիշխան, վասն զի բանական է: Արդ, որք մեղադրեն զԱստուած, զի որ արար անընդունակ չարութեան զմարդն, այլ անձնիշխան, զի զոր կամի՝ կարէ առնել, այնպիսիքն զանխլանան ինքեանց՝ մեղադրելով Աստուծոյ, զի բանական արար զմարդն և ոչ անբան. քանզի ի հարկէ մինն յերկոցունց՝ կա՛մ լինել անբան և ոչ զոլ անձնիշխան, կա՛մ զոլ բանական և լինել անձնիշխան»** (էջ 111):

Մարդու անձնիշխանությունը ժխտողները չեն բավարարվում այս առարկությամբ, այլ բերում են բազում փաստարկներ՝ ցույց տալու համար, որ մարդը բնավ էլ անձնիշխան չէ, որ նրա գործողությունների պատճառը կա՛մ Աստված է, կա՛մ անհրաժեշտությունը, կա՛մ ճակատագիրը, կա՛մ բնությունը, կա՛մ բախտը, կա՛մ էլ պատահականութ-

յունները: Այսինքն՝ մարդու կամքի ազատությունը ժխտում են Աստծո էությունն ու մարդու բնությունը սխալ մեկնաբանողները, ճակատագրապաշտները և ծայրահեղ դետերմինիստները: Այս հարցում Որոտնեցին համառոտելով մեկ առ մեկ կրկնում է Նեմեսիոսի փաստարկները (տե՛ս էջ 112-114): Օրինակ, ըստ Նեմեսիոսի երկրորդ փաստարկի՝ «Եւս, եթէ և ոչ միոյ գործոյ է սկիզբն մարդ՝ աւելորդ ունի զխորհելն. քանզի ի զի՞նչ պէտս է նմա խորհուրդ, և ոչ միոյ գործոյ գոլով տէր: Իսկ զգեղեցիկն և զպատուականն որ ի մարդ՝ աւելորդ ասել՝ ի յոյժ անտեղեացն է: Արդ՝ եթէ խորհի, գործոյ սակս խորհի, քանզի ամենայն խորհուրդ՝ գործոյ աղագաւ և վասն գործոյ» (էջ 136): Որոտնեցին կրկնում է Նեմեսիոսի միտքը՝ «**Երկրորդ, պատասխանի, զի թէ որպէս ասեն հակառակողքն ոչ է մարդ տէր գործոց իւրոց՝ աւելորդ ունի զխորհելն, քանզի զի՞նչ պետք է նմա խորհուրդ, եթէ ոչ է տէր գործոց իւրոց, իսկ զպատուական և զգեղեցիկն ի մարդ աւելորդ ասել՝ յոյժ անտեղի է: Արդ, եթէ խորհի մարդ՝ գործոյ սակս խորհի, քանզի ամենայն խորհուրդ՝ գործոյ աղագաւ և վասն գործոյ**» (էջ 113):

Որոտնեցին համամիտ է Նեմեսիոսի այն մտքի հետ, որ բանական ու անձնիշխան լինելը Աստծուց է, բայց կամենալն ու ընտրելը մարդու կամքի արտահայտություն են: Աստված կարող է անհրաժեշտության դեպքում միջամտել մարդու գործերին, բայց չի կարող բռնանալ կամ հետ վերցնել նրա ազատությունը, որովհետև առանց կամքի ազատության մարդը կդադարի մարդ լինելուց: Մարդու վարքի պատճառավորվածության հարցը քննարկելիս Որոտնեցին քննադատում է այն տեսակետը, թե իբր Աստված է մարդկանց գործերի տերը և ամեն ինչ ի վերուստ նախասահմանված է: Աստված մարդուն ստեղծել է, կեցություն պարգևել, բայց նրան ոչ թե հրամայում կամ պարտադրում է այս կամ այն բանը անելու, այլ ընդամենը նախախնամում է, պատվիրանների միջոցով հորդորում խուսափել չար մտադրություններից ու գործերից: Եթե Աստծուն վերագրենք նման գործառույթ, գրում է Որոտնեցին, ապա դա կնշանակի, նախ, որ Նա մարդուն չի ստեղծել անձնիշխան, ինչը չի համապատասխանում իրականությանը, երկրորդ, որ Նա նաև չար գործերի պատճառն է, ինչը անմտություն է: Երրորդ, մարդու չար ու բարի գործողությունների համար պատասխանատու է դառնում Աստված: Չորրորդ, դա հակասում է Աստծո մասին պատկերացմանը: Աստված համակ բարություն է, ամենայն բարիքների պատճառը, հետևաբար Նա չի կարող դառնալ չար գործերի հեղինակ: «**Իսկ Աստուած չար ոչ կարէ առնել,** - գրում է Որոտնեցին, - **վասն զի ամէնևիմբ բարի է, այլ իւրաքանչիւր ոք ազատ կամօք զորս ընտրէ՝ ժառանգէ, եթէ զբարի գործս՝ զարքայութիւնն յաւիտենական և եթէ զչար գործս՝ զաւիտենական տանջանսն. ոչ թէ Աստուած է պատճառ տանջանացն, քա՛ւ լիցի, այլ իւր ազատ կամքն և չարաչար ընտրութիւնն**» (էջ 212):

Տարրերի բնության հարցը: «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր

և գործք ձեռաց քոց երկինք են» ճառում[20] Որոտնեցին օգտվում է Նեմեսիոսի երկի 5-րդ գլխից («Յաղագս տարերց»), որում Նեմեսիոսը շարադրում է տարրերի և դրանց որակների ու հատկությունների մասին տեսությունը: Այդ ճառում Որոտնեցին, ի տարբերություն Նեմեսիոսի, իր տարրաբանությունը շարադրում է հարցադրումների (որոնք մեծ մասամբ բխում են Նեմեսիոսի տեքստից) միջոցով. ի՞նչ է տարրը, ինչպիսի՞ն են տարրերի որակները, ինչո՞ւ է կոչվում «տարր», քանի՞ տարր գոյություն ունի, և ինչո՞ւ են դրանք չորսը, ինչպե՞ս են դրանք միախառնվում և այլն: Այս հարցերի պատասխանների ժամանակ Որոտնեցին օգտվում է Նեմեսիոսի երկից հատկապես այն դեպքերում, երբ տրվում են հասկացությունների սահմանումներ (օրինակ, Նեմեսիոսը տարրը սահմանում է հետևյալ կերպ՝ «Տարրն աշխարհական՝ է մասն նուաստ շարախառնութեան մարմնոց» (էջ 60), իսկ Որոտնեցին՝ «**Եւ զի սահմանօրէն տարրն աշխարհական է մասն նուաստ շարախառնութեանց»** (էջ 129), կամ երբ նա ներկայացնում է տարրերի վերաբերյալ անտիկ փիլիսոփաների (Թալեսի, Անաքսիմենի, Հերակլիտեսի, Պլատոնի, Արիստոտելի և այլոց) տեսակետները: Համեմատելով Նեմեսիոսի և Որոտնեցու բնագրերը՝ բերենք համընկումների մի քանի օրինակ:

ա) **Նեմեսիոս**՝ «Իսկ Պղատոնի թուեցաւ երից տարերց փոխարկիլ ի միմեանս. բայց երկրի անփոխարկելի մնալ. Քանզի նմանեցուցանելով իւրաքանչիւրում տարեր՝ զհաստատութիւն ուղղագծիցն ձևոց, երկրի զկիւբիկոնն ձև, վասն զի անշարժագոյն է քան զայլսն, իսկ ջրոյ՝ որ քան զայլսն դժուարաշարժագոյն՝ զիկոսաէդռոնն, իսկ զդիւրարաշարժագոյն զպիւռամոիդէսն՝ հրոյ…» (էջ 64-65):

Որոտնեցի՝ «Պղատոնի թուեցաւ երիցն փոխարկիլ ի միմեանս, բայց երկրի անփոխարկելի մնալ, քանզի նմանեցուցանէ երկրի զկիբիկոն ձևն, որ է քառակուսի, զի անշարժագոյն է քան զայլսն յուղղագծից ձևոց, իսկ ջրոյ՝ զկուսայեդռոնն, որ է քսանանիստ, իսկ զպիռամիդէսն՝ հրոյ» (էջ 130-131):

բ) **Նեմեսիոս**՝ «Իսկ Արիստոտելէս երկուս սեռս ասաց գոլ օդոյ, է՛ ինչ՝ որ տամկատեսակ, որ ի գոլորշոյ ջրոյ, և է՛ ինչ՝ որ ծխատեսակ, որ ի շիջմանէ հրոյ…» (էջ 63):

Որոտնեցի՝ «Իսկ Արիստոտէլ երկու սեռ ասաց գոլ յօդոյ՝ մին չոր և ծխատեսակ լեալ, որ ի շիջմանէ հրոյ, և միւսն տամկատեսակ, որ ի գոլորշոյ ջրոյ…» (էջ 130):

գ) **Նեմեսիոս**՝ «Ասեն և Ստոյիկեանքն զտարերս զոմանս արարողականս, և զոմանս կրականս. արարողական՝ զօդ և զհուր, իսկ կրականս՝ զերկիր և զջուր» (էջ 66):

Որոտնեցի՝ «Ասեն ստոյիկեանքն զտարերքս զոմանս արարողա-

---

[20] Ստորև ասելիքը վերաբերում է նաև «Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց» աշխատությանը, որում հանդիպում եմք տարրերի մասին գրեթե նույն դատողություններին (տե՛ս «Յովհաննու Որոտնեցւոյ Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց», էջ 360-369):

կանս և զոմանս իգականս. արարողս՝ զհուր և զօդ, զի ներգործող են և ազդող, իսկ զջուր և զերկիր՝ իգականս, այսինքն՝ կրող և ընդունող ազդմանց սոցա» (էջ 132-133):

Որոտնեցին օգտվում է Նեմեսիոսի երկի 5-րդ գլխից նաև այն դեպքում, երբ շարադրում է տարրերի կազմության, որակների, տարրերի հարաբերակցության, փոխարկությունների ու միավորման միջնորդ օղակների մասին հայացքները (տե՛ս Նեմեսիոս, էջ 60-68, Որոտնեցի, էջ 128-131):

Այսպիսով, վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ Նեմեսիոսի «Մարդու բնության մասին» երկը զգալի ազդեցություն է ունեցել Հովհան Որոտնեցու փիլիսոփայական հայացքների ձևավորման վրա, ինչը նկատվում է նրա տարբեր, հատկապես այն աշխատություններում, որոնցում դիտարկվում են ինչպես մարդաբանական՝ բարոյագիտական ու հոգեբանական, այնպես էլ բնափիլիսոփայական հարցեր: Որոտնեցին ոչ թե մեկնաբանում, այլ օգտագործում է (նույնությամբ կրկնելով, համառոտ վերաշարադրելով, լրացնելով) Նեմեսիոսի երկի նյութերը՝ իր ասելիքը հիմնավոր ու համոզիչ ներկայացնելու և քննարկվող հարցի մասին ամբողջական պատկերացում ստեղծելու համար:

Բանալի բառեր – *Հովհան Որոտնեցի, Նեմեսիոս Եմեսացի, փիլիսոփայական առնչություններ, քրիստոնեական մարդաբանություն, մարդու բնություն, հոգի, կամքի ազատություն, չորս տարրեր*

СЕЙРАН ЗАКАРЯН – ***Немезий Емесский и Иоанн Воротнеци (философские соотношения).*** – Трактат жившего в IV-V вв. Немезия Емесского «О природе человека» был переведён на армянский язык в начале VIII в. и оказал значительное влияние на развитие армянской философской мысли средневековья и Нового времени. Тем не менее, вопросы, касающиеся перевода и комментариев к этому сочинению, а также его влияния на армянскую средневековую философию, до сих пор не разъяснены должным образом. Частично устраняя этот пробел, автор показывает, как повлиял трактат на взгляды выдающегося богослова и философа Иоанна Воротнеци (1315–1388). Это влияние чувствуется в разных его трудах, особенно в тех, где исследуются антропологические, этические, психологические и натурфилософские вопросы. Армянский учёный по-разному использует сочинения Немезия: местами повторяет его мысли, кое-где вкратце излагает оригинальный текст, иногда переформулирует суждения Немезия, а в случае необходимости дополняет их собственными суждениями.

Ключевые слова: *Иоанн Воротнеци, Немезий Емесский, философские соотношения, христианская антропология, природа человека, душа, свобода воли, четыре элемента*

SEYRAN ZAKARYAN – ***Nemesius of Emesa and Hovhan (John) Vorotnetsi (Philosophical Relations).*** – Nemesius of Emesa's treatise «De Natura Hominis» («On Human Nature») was translated into Armenian at the beginning of the VIII century (mistakenly attributed to Gregory of Nyssa) and had a significant impact on the Armenian philosophy of the Middle Ages and New Age as well. Despite that, the scientific community has not yet been properly presented with the questions related to

the Armenian translation and interpretations of Nemesius's treatise, as well as to its influence on the development of the medieval Armenian philosophy. The purpose of the article is eliminating this gap by showing the influence of Nemesius's treatise on the philosophical-anthropological views of the well-known medieval Armenian theologian-philosopher Hovhan (John) Vorotnetsi (1315-1388). The impact of Nemesius's treatise is noticeable in Vorotnetsi's different works, especially those where both anthropological, ethical and psychological, as well as natural philosophical questions are observed. Vorotnetsi uses Nemesius's treatise in different ways: a) almost identically repeats his thoughts, especially when represents the opinions of different thinkers on various questions or when presents definitions of a concept; b) summarizes, cuts the original text often omitting certain paragraphs, opinions and names; c) paraphrases the cited statement, at his discretion moves the parts of original texts and as needed supplements the texts by his own thoughts, or of biblical or other thinkers. Analyzing the questions concerning the nature of the soul, free will and the nature of elements author shows in the article the scope of owning and usage of Nemesius's treatise's ideas by Vorotnetsi.

Key words: *Hovhan (John) Vorotnetsi, Nemesius of Emesa, Philosophical relations, Christian anthropology, human nature, Soul, free will, four elements*